ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 03 » փետրվարի 2026 թվականի թիվ 22 - Ա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՂԱԾ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի հունվարի 22-ի թիվ ԴԽ/30.2/2075-2026 հանձնարարականը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. <<ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ, <<ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, <<ՀՀ Վայոց ձորի մարզի Չիվայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տանող ճանապարհների վերաբերյալ մասնագիտական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Իրականացնել ուսումնասիրություններ, գույքագրել դպրոցների բակից մինչև համապատասխան բնակավայրերի կենտրոններ եղած հեռավորությունները, յուրաքանչյուր դպրոցի համար կատարել նշված ճանապարհների նորոգման խոշորացված հաշվարկներ, ներկայացնել նախագծման համար պահանջվող ժամանակահատվածը, ինչպես նաև նորոգման աշխատանքների իրականացման համար պահանջվող տևողությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

ք.Եղեգնաձոր

Հավելված՝
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2026թ. փետրվարի 03 -ի
թիվ 22 -Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՂԱԾ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Արտյոմ Ղևոնդյան - <<Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամ>> անհարթության ցուցանիշի հավաքագրման ինժեներ
2. Արմեն Աղաջանյան - Եղեգնաձորի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ
3. Սամվել Իխտիարյան - Վայքի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ
4. Ռոման Մկրտչյան - Վայքի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության գլխավոր մասնագետ
5. Սմբատ Սարգսյան - Արենի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության գլխավոր մասնագետ
6. Սեդա Հարությունյան - Չիվա բնակավայրի վարչական ղեկավար
7. Աշոտ Օհանյան - Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ